

Վ. Ս. Ս. Ս.

Վ. Ս. Ս. Ս.

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան 12 Ժր.
Վեցամսեայ 6 Ժր.


ԱՐՏԱՍԱՇՄԱՆ

Երկու թիւը մեկ ժրարով
Տարեկան 14 Ժր.
Վեցամսեայ 7 Ժր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօլ.
Վեցամսեայ 1.50 Տօլ.
ԿԱՆԻՅԻ

ԾԱՆՈՒՑՄԱՆ ՏՈՂԸ
20 ՄԵԹ.



Լ Ր Ա Կ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵՆԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Redaction du Journal

«Гравунк»

(Bulgarie) VARNA

Редация

на ВѢСТНИКЪ

«Гравунк»

ВАРНА

Իրաւօրէնք եւ չեմ
տրուիր

ՄԻԱՍԻՏ ՈՒ ՏԻՍԱՐ Ի Օ Ս Ք

Օր չանցնիր որ թերթերու և կուսակցական գումարումներու մէջ սա սոսկալիօրէն միամիտ ու տխուր խօսք չը կրկնուի, թէ անյաջողութիւններէ վերջնէ որ հակադաւաճական (իմացիր գիտակցօրէն և ճշմարտապէս յեղափոխական) տարրը իր լեզուն բացառու սկսաւ յարձակումներու:

Պէտք է՝ Հնչակէն սկսած ամբողջ 20 տարուան պատմութիւնը ընել, ու է գիտական ու փորձառութեան հիմ, ու մտացուած յատակագիծ չունեցող կուսակցական արկածախնդրութիւններուն, ու գուրս բերել սուրբ գործի անունով կատարուած բոլոր անլուր ապուշութիւնները, տօնքիցոտութիւնները, սուտերը ու վատութիւնները և անոնց գէմ եղած որոգումները՝ իրենց տեղովը, անուններովը, թուականներովը և այլ պարագաներովը՝ ցոյց տալու համար թէ որքան ծիծաղելի է այդ գաղափարը, և թէ ինչպէս գեռ սկիզբի օրերէն թրքահայ երիտասարդութեան շուրջ, հայրենասէր և խելքը գլուխը մասը գէմ կեցած ու մաքառած է այս ապուշ արարքներուն գէմ՝ դանոնք գտնելով անժամանակի յիմար և կործանարար բայց վէպերով սնած և գիտական ամենատարրական ու տիեզերական ճշմարտութիւններուն և բուն իսկ իրականութեան անտեղեկ մանուկ ու դիւրամալ երիտասարդութիւն մը յափշտակուած կարգ մը կովկասցի չաւաթաններու ստորէն՝ որոնցմէ մաս առ մաս պիտի պատմենք մեր գիտցածներէն՝ չէին ուզեր իսկ մտիկ ընել՝ ականջնին ու աչքնին գոցելով՝ ճիշդ ու ճիշդ թուրքի մը մոլեռանդութեամբ ու տգիտութեամբ, որը Ղուրանէն զատ գիրք և իմամին խօսքերէն դուրս ճշմարտութիւն չի ճանչնար:

Բայց ձգենք հիմակուհիմակ սա հին պատմութիւնները, որոնց գեռ ատենը չէ հասած և որոնք

երբ ստուգօրէն ըլլուն՝ հոն դիւրաւ պիտի տեսնուի թէ իսկապէս որոնք եղած են այն «չորիքները» այն «ղանազան մութ տարրերը» «գաւաճանները» ևն. ևն. որոնք կուսակցական թերթեր բերաննաւ համար ըրած կը կրկնեն ու կը կրկնեն առհասարակ բոլոր իրենցմէ չեղողներուն գէմ, ու մենք քննենք միայն թէ՛ մեզի եղածը իրօք անյաջողութիւն էր թէ՛ մաթեմատիքական ճշդութեամբ և կամ բնական ու տարրաբանական օրէնքներով բուն արդիւնքը այն գործողութեան, որ կատարուեցաւ. ինչ որ գիտնալ պէտք է ինչպէս չափափակ փուկ ու վտանգաւոր գործի մը ինքնակոչ առաջնորդներ ներկայացանք:

Դարի ցանուած տեղը ցորեն չի բուսիր. պիտի քննենք հետզհետէ ուրեմն թէ՛ մենք ի՞նչ ցանած էինք և ի՞նչ կուգէինք քաղել. բայց ատենց սկսելէ առաջ յօգուածով մը պիտի ջանամ պարզել թէ՛ ինչպէս կուսակցական այս վաղաժամ և տհաս արկածախնդրութիւնները մեծ ու լայն տեղ մը բացին ամենէն գէշ տարրերուն՝ վանելով լաւ տարրերը և ստեղծելով ամենէն գէշ մթնոլորտը, ուր թունաւոր սունկերու պէս օրէ օր աճելու վրայ է սոսկալիօրէն յիմար ու անհաշիւ սեյուղ մը, որ ահարկու եղած է իր ապուշութիւններովը. մինչդեռ ճշմարտապէս հասուն յեղափոխութիւն մը ասոր գլխովին հակառակը պիտի ընէր:

ՄԱՐՈՒՆ

ՀԱՅԵՐԻ ՈՒ ԲԱՅԵՐԻ ԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Ընկերվարական խնդիրը հայոց համար նոր չէ. պէտք է սակայն ըսել թէ վերջին ժամանակներու մէջ հայ թերթերը աւելի մեծ ուշադրութեամբ մը այս խնդրով զբաղեցան. Ժօրէսի ու Հէրվէի միջեւ ծագած վէճը, որ այնքան աղմուկ հանեց ամբողջ աշխարհի մէջ, հայ մամուլէն ալ արձագանք գտաւ ու արտասահմանի հայ թերթուն հետ Մշակ ալ անով զբաղեցաւ. Եւրոպայի հայ ուղանողութեան մէջ

յառաջ եկած պատկառման հոյն պէս թերթերը ընկերվարականութեամբ զբաղեցուց. Միւս կողմէ գիտէինք արդէն թէ Հին Հնչակեանները այսօր բոլորովին մէկ կողմ թողած են ազգայնական պայքարը, ու հիմա կը մղեն միմիայն ընկերվարական հողին վրայ կանգնած, Գալով Դաշնակցութեան, Դրօշակի վերջին թիւով հրատարակած է պաշտօնագիր մը, ուղղուած Պիւսէլի միջազ. ընկերվ. կոմիտէին, անով ցոյց կուտայ թէ այս կուսակցութիւնն ալ կը յարի միջազ. ընկերվարութեան սկզբունքներուն:

Պիտի արժէք ուրեմն որ այսքան տեսակետներով հայերը շահագրգռուելու ընդդէմ ունեցող խնդրի մը վրայ լայն վիճաբանութիւն մը բացուելու, գաղափարները կատարել ազատութեամբ արտայայտելու հիմի վրայ, որպէս զի կարելի ըլլար տեսնել թէ գործին էութիւնը ինչ է, ու հայերը ինչ ունին կորսնցնելիք կամ շահելիք, հետեւելով ազգայնական կամ դասակարգային կոմիտէի:

Առ այժմ պիտի բաւականանամ այս վիճաբանութեան հիմ բռնել եւս ընկերվարութեան նուիրուած «Իրաւունք»ի մէկ խմբագրականը, ուրիշ անգամի վերադառնալով նոր պատասխան մը, եթէ «Իրաւունք» կամ ուրիշներ նոր առարկութիւններ բնեն:

«Իրաւունք» կը դատաւարտէ հայ ընկերվարական գործունէութիւն մը. ինչ տեսակէտէ խնդիրը դիտելով. առաջ համար տրեւոք որ ընդհանուր առմամբ ընկերվարութեան մարդկային ընկերութեան կամ թէ ժողովուրդներու զարգացումին տեսակետով վեհապարսկ զգրուածներ իրագործելու կը միտին. անոր համար որ, ինչպէս կը կարծէմ ընկերվարական նպատակը ամէն կերպով սքանչելի ըլլալով հանգեցնէ, անկարելի է որ իրենց արդի սկզբունքներով ընկերվարականները իրենց այդ նպատակին իրագործումին յանգին, նկատելով որ կընդունին ընտրողական գրութիւն մը, օրէնսդիր ու գործադիր իշխանութիւններ, հետեւապէս զինուորականութիւն, եւն. որոնք անխուսափելի կերպով ապագային մէջ ալ ինչպէս այսօր, ամէն կարգի կառավարականութիւններու առջեւ լայն դուռ մը պիտի բանաւ կամ թէ «Իրաւունք» միմիայն հայոց համար ու արդի պայմաններուն մէջ ընկերվարութիւնը վրնասակար կը համարի շատ կարեւոր էր որ ընկերվարութեան գէմ ելնողները նախ այս կէտերը լուսարանէին. խնդիրը սակայն առայժմ հայոց տեսակետով քննելով, կարելի է ըսել որ «դասակարգային կոմիտէ» հայոց վեհապարսկ բերել. ըստ «Իրաւունք»ի, «երբ օգտակար չէ հայրենիքի ազատու-

թեան խնդրէն դուրս ընկերվարական եւ այլ օտարամուտ պայքարներով զբաղել եւ ներքին դասակարգային կոմիտէներ առաջ ընել, որոնք կրնան հայոց ուժերը ջլատել»։ Այնպէս որ հայոց համար միակ նպատակ մը ըլլալու է հայրենիքի փրկութեան գործը. ու այս մեծ գործը կը պահանջէ որ ամէն հայ առանց դասակարգային խտրութեան եղբայրակցական բոլորանուէր ջանքերով ուս ուսի տուած նուիրուի միայն այն շահերին որ ուղակի հայ հայրենիքի փրկութեան կատարողներն են:

Ի՞նչ է սակայն այս «հայրենիքի փրկութիւն» ըստաւոր. տարբեր բացատրութեամբ, ինչո՞ւ ժողովուրդ մը, այսինքն անհատներու ամբողջութիւն մը, կը ձգտի զէպի տնկախութիւն, զէպի ազատութիւն. անոր համար արդեօք որ կարենար օր մը ինքնասիրական գոհացումներու յագուրդ տալ, կամ «հայրենիք» ըստած երեւակայական կուռքի մը պաշտամունք մատուցանել ազատօրէն. կամ թէ չէ՞ որ ազգ անունով հասկցուած անհատներու հաւաքականութիւն մը կուգէ անկախ ըլլալ, որպէս զի այդ անհատներու մեծամասնութիւնը, միջոց կարելիութիւն ունենայ կեանքի մէջ բաժին ունենալ. լաւ բարոյութեան աւելի մեծ վայելք մը, այս տեսակետով «հայրենիքի փրկութեան» գաղափարը կամ նպատակը պէտք էր հումանիշ նկատուէր «ժողովուրդի մը անդամներուն մեծամասնութեան բարօրութեան, վայելքի աւելի լայն բաժին մը ընձեռելու» գաղափարին կամ նպատակին. այնպէս որ եթէ այս նպատակին չի յանգէր «հայրենիքի փրկութեան» գործը ինքնին շահակութիւն պիտի չունենար, պատրանք մը, ինքնախաբէութիւն մը եւ զամ պիտի ըլլար:

Ամբողջ խնդիրը ուրեմն կը կայանայ սա հարցումին պատասխանելու մէջ թէ հայերը կրնան իրենց այս նպատակին իրագործումին—այսինքն իրենց մեծամասնութեան վիճակին համար բարօրութեան լաւագոյն պայմաններ ապահովելու—յանդիլ. իրենց ազատագրական կոմիտէներով առանց դասակարգային խտրութեան:

Պէտք է սակայն նկատել թէ «դասակարգային խտրութիւն» ոչ թէ օտարամուտ է, այլ արդէն կայ ու կը մնայ որքան ատեն որ պիտի ըլլան հարուստ ու աղքատ հայեր, այսինքն ունեւորներու դասակարգ մը, ու չունեւորներու դասակարգ մը:

(Շարունակելի)



ԴԱՐՄԱՆՈՒՄ ԵՒ ԲՈՒԺՈՒՄ ՀԻՒԾԱԽՏԻ

— * —

ԳՐԵՑ

ՏՕ ԳԹ. Մ. Ի Թ Ի Ժ Ժ Ժ Ժ Ժ Ժ

ԲԻՐԵՎ ՍՐԲՈՒՆԻ ՊԱԼԱՏԱՆ

Վկայեալ Առաջին Բժկ. Վարժարանէ Կ. Պոլսոյ (1862) եւ Բժկ. Համալսարանէ Բարիզոյ (1867)

Աղաւ Յրանայի, Անգղիոյ, Գերմանիոյ, Ռուսիոյ, Իտալիոյ, Բանաստեղծի եւ Ամերիկայի եւն. Առողջապահական Ընկերութեանց

— * —

ՅԱՌԱՋԱՐԱՆ

— 0 —

Փամանակիս պատուհասներէն մին՝ հիւժախտը, այսօր հոս, վաղն ուրիշ տեղ, մերթ Եւրոպայէն երեւան Եւրոպայէն, ժամանակս կոչուած երկու տարաբնուի հիւանդութիւններէն անհասկնալի կերպով աւելի ջարդ տուող զմեզ հիւանդութիւն մըն է. կը տիրէ մշտնջենաւորապէս ամեն տեղ, միշտ եւ հասնապաղ առանց նկատողութեան առնելու ազդ. սեռ, տարիք ու բնական վայր, անձայն, ծածուկ, թշնամիք նման, ընկերացած օդին, ֆրանկալա-տին ու քորսէին, քաջալերուած հասարակաց առողջապահութեան թերի գործադրութեան եւ անհատական առողջապահութեան անբաւականութեան:

Միայն մայրաքաղաքիս մէջ շաբաթը 50էն աւելի թոքախտաւորներու մահեր պատահելը պաշտօնապէս կը հրատարակուի:

Վիճակագրութիւնը կըսէ թէ՝	
Լոստոնի մէջ 10,000 բնակիչներէն 17,6ը	
Հոտի մէջ » » 18,8ը	
Կ. Պոլսոյ մէջ » » 22,6ը	
Պերլինի մէջ » » 23,1ը	
Լայպցիքի մէջ » » 24,4ը	
Բարիզի մէջ » » 30,8ը	
Պրատարէի մէջ » » 36,ը	

հիւժախտէ կը մեռնին:

1905-1906ին միայն մայրաքաղաքիս մէջ 2,836 թոքախտաւոր մեռած են:

1576 Թուրք 18 0/0 Թուրքերու համար

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

95

ԱՌԱՋԱԿԱՊԵՏԸ

— * —

ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՌԱՋԱԿԱՊԵՏԸ

(Շար. նախորդ թիւէն)

— Ատիկա բան մը չէ. նկատել տուաւ Ռէս Մէլիք, որովհետեւ այս գեղացիները չունին իրենց մէջ օտարներ. Գիշերով զիւրը մտնել կըրցան մի . . . ա՛յ աղատ են. Թուրք կառավարութիւնը չիմանար:

— Աղէ՛կ, մինք ալ այդպէս կ'ընենք: Արդարեւ, երկու օր կտըք, Ռէս Մէլիքի եւ Աւագակապետի առաջնորդութեամբ այդ հարկերի մօտ թշուառ գաղթականներն ապահովաբար իրենց գիւղեր մտան, ամէնքն ալ վանեցիւ:

Ռէս Մէլիք իր աղջկան հետ լքաղ-քին մէջ տուն մը վարձեց ու հոն բը-տնու գրիտ: Եւ որովհետեւ Աւագակա-

355 Յոյն 16 0/0 Յոյներու համար
279 Հայ 25 0/0 Հայերու »
186 Հրեայ 10 0/0 Հրեաներու »

2836

Իրաց այս տխուր վիճակէն յու-ղեալ, ազգերը, կառավարութիւնները, անտեսողները, մարդասէրները, Աւագակապետներն եւ մասնաւորապէս բը-ժըշկական Գիշերները զբաղած են ու կը զբաղին միշտ ընկերական ու կեն-սական այս մեծ ենդրով:

Հիւժախտը ժառանգական ըլլալով հանդերձ, մարդէ մարդու, անասունէ մարդու, ինչպէս եւ միտի, կաթի ու փոշիի միջոցով փոխանակել հիւանդու-թիւն մըն է, որ զօրազգաբար մինչեւ այսօր շատ մը հոշակաւոր ու մարգա-տէր բժիշկ-քսմէսէսներու կողմէ ան-բուժելի դատապարտուած է:

Բայց ընթերցողները կրնան վստահ ըլլալ թէ մինչեւ ցարդ անբուժելի կարծուած այս դէշ հիւանդութիւնը, բարակ ցաւը, պարզ թոքախտաբէ նման կրնայ բուժուիլ, եւ այս ալ առանց առաւելի (սըչան օթու), ֆրեզքորի (քաթրան բուշը), կայնալօյի, իօսի ֆօսֆօրի եւ ասոնց նման քիմիական թունաւոր դեղերու, որոնք մեշտ վը-տանդաւոր են:

Ուրախ եմ հրապարակաւ յայտնելու թէ 40 ամեայ փորձառութեամբս եւ յարատեւ աշխատութեամբս, շնորհիւ Աստուծոյ, սա մէկ քանի տարուան մէջ նուազագոյն կողմէ դարմանուած, ոչ միայն Ա. եւ Բ. այլ մինչեւ եր-րորդ աստիճանի հասնող հիւժախտա-ւորներ կատարելապէս բուժուած ըլլա-լով, այսօր կը համարձակիմ՝ հրապար-կաւ ծանուցանել ասիկա եւ հրաւի-րել այս հիւանդութիւնէն տառապող հիւանդները անգամ մըն ալ մեզ դի-մելու, թէ մեր կողմէ դարմանուող ու բուժուողներուն օրագրութիւնը աշխ-տանքներու եւ թէ անոնց անուններն ու քննակապարտներն իմանալով ան-ձամբ եզրուութիւնը ստուգելու համար:

Մեզ զիմով հիւժախտաւորները ներ-սէն գործածելի քիմիական ու եւ է թունաւոր դեղեր չպիտի առնեն, ա-նոնց մարմինն մէջ ընդմիջեալ ներ-արկուցներ չպիտի ըլլան: Մեր գոր-ծածած դեղերը միշտ բուսական, միշտ պարզ, միշտ բնական եւ մանաւանդ միշտ զոտրուկ գործածուելի են:

Մեր բուժման եղանակն է ամբողջ մարմինը դեղախառն ջուրով սրբել, հիւանդ մասերուն վրայ տածել (լափա) դնել. նաեւ օդով, սնունդով եւ մաս-հաւորապէս առողջա-լիկ խնամքնե-րով դարմանել հիւանդը: Հարուստին, աղքատին, ամենուն դիւրամատչելի են մեր դարմանները եւ ուր որ ալ բնա-կի հիւանդը ճամբորդութեան, օդա-փոխութեան նման ծանր իւրեքներե-րու պէտք չկայ:

Մի՛ վախճաք բարակ ցաւէն, վի-րիւնէն. մեր կողմէ գործածելի դեղերն ու խնամքները քաւական են ոչ միայն Ա. եւ Բ., այլ մինչեւ Գ. աստիճանի հասնող հիւժախտաւորները բուժելու: Բայց դարմանուելու համար, ի՞նչու սպասել որ մարմինը հալած, մաշած ու բոլորովին անյոյս վիճակի հասնի:

Ուստի հազով, խուխով, քրտինքով ու անքունութիւնով գիշեր ցորեկ հանգիստ չունեցող յուսահատ հիւժ-ախտաւորները կրնան ապահով ըլլալ թէ կարող պիտի ըլլան այս սոսկալի հիւանդութիւնէն կատարելապէս բուժ-ուիլ, իբրեւ ամենապարզ թոքախտաբէ մը (սաթլըման):

Ո՛վ կրնայ ուրանալ թէ ջրաբուժու-թիւնը, մարդկութեան հետ ծնած եւ շատ դարեր առողջապահութիւնը ներ-կայացուցած չէ:

Բժշկական պատմութիւնը կը սորո-վեցնէ թէ նախնի դարերու մէջ, ա-մէնէն մեծ ու հոշակաւոր բժեղիկները ջրաբուժութիւնն էր գործ դրած են, ու-րոնցմէ առ այժմ մէկ քանիներու ա-նունները յիշել բաւ կը համարուի:

Ավիսէն՝ արաքացի մեծ բժիշկը, Սէլս՝ բժիշկներուն կրկնորդը, Հիպոկ-րատ՝ ամենուն ծանօթ եւ բժիշկնե-րուն պապան, Կլիւկէր, Պաքսու, Յը-լուալէ, Ժան Ֆրեդերիկ Հոֆման, Պէր-կուս, Սկուկէթըն, Միւզա, Թիսո, Ժանսիթիսման Հոմ, Յիլօնի, Լոկ, Հիւֆանտ, Բրէյնից, անմահ Բնայր, Իսկ մեր ժամանակին ապրողներէն Վինթէռնից, Վիննեայի հոշակաւոր դասաւանդ, մեր բարեկամներէն Պօն-կաթըն (Գերմանիա), Պօնայմէ (Արմենիա), Ժուաու, Ռիւքսէ (Բարիզ), Ֆուրիթօն (Լուաու) եւն. եւն.:

Ասոնք, ամէնքն ալ յայտարարած են թէ բժշկութեան ապագան, եւ ալ ա-նարժանաբար կաւելցնեմ թէ առող-

ջութեան հմար ջրաբուժութիւնն է:
Անհրաժեշտ կերպով անպարտաւոր-է բնախտութեամբ եւ անտարանական կազմախտութեամբ թէ ջուրով ամեն բուժելի հիւանդութիւններ կը բուժ-ուին (Վիրիւս), սրովհետեւ:
Բնութիւնը կը բուժէ, իսկ բժիշկը կը դարմանէ:
(Շարունակելի)

ՎԻՍԱԿՑԱԿԱՆ ՍԻՆԱԿ

ՎԵՐ. ՀԻՉԱԿԵԱՆԻ

Թաւշանճանի սպանութեան դա-տապարտելի գործը առիթ է տուել Վեր. Հիւանդութեան դէմ ամէն կողմէ յարձակումներ սկսելու: Պատր ջուրի մէջ ձուկ որսալ ուղղողները կը ջանան միայն քանի մը մարդու կողմէ գործողած այդ ոճիւրը ամբողջ կուսակցութեան վերագրել, եւ այս սխալ հիման վրայ ոտքերնին դնելով, հարուածել ու հարուածել այդ կու-սակցութիւնը: Բայց ժամհարանցը, Պալեօգեանը եւ զեռ ուրիշ շատ շա-տեր անիրաւաբար սպանող Դաշնակ-ցութեան օղկանները դոնէ քիչ մը համ-բերութիւն ունենալու էին տեսնելու համար թէ գիտակցութեան — եւ ոչ կոյր հետեւողութեան — վրայ հիմ-նուած Վեր. Հիւանդութեան վստահութե-ան պատիժ չէր թողուր իր վստահութե-ան յարաբար գործածող մէկ քանի յան-ցապարտներ: Արդէն Ունեանի բա-պանման, եւ վերջին Պատգ. Ժողովոյ առթիւ ծագած ներքին պոռթկումն-ը անգամ մըն ալ առիթ ընծայած էին անվերապահօրէն ապացուցանելու թէ Վեր. Հիւանդ. կուսակցութիւնը իր ստուար մեծամասնութեամբ գիտակից տարրերէ կազմուած է եւ ոչխաբային համակերպութեան զերծ կուսակցու-թիւն մըն է:

Պատկաւորութիւնս քաջքն կ'ընէ դաշ-նակցական թերթ մը: Սխալ է. պա-ռակտուծ չէ այս անգամ Վեր. Հիւան-դութեան մէջ պատահածը, այլ ճշմարիտ յեղափոխութիւն մըն է բոլո-րակցութիւնը անործող քանի մը ոճիւր-բոյժ չէֆերը տապալելու. այսինքն

ուած է . . . միայն «Վանական» ա-նուն մը քանդակելով մեր ամենուս սրտին մէջ:

Ռէս մէլիք ակամայ շարժում մը ը-րա ու բոլոր մարմնովը սարսափ . . . հարծեց թէ պաղ ջուր մը լեցուեցաւ գլխէն վար ու իր էութիւնը փուշ փուշ եղաւ:

Ա՛յ, կեցէ՛ք . . . յայտնեցէ՛ք ին-ծի ձեր ո՛վ ըլլալը . . . բացառաւոր Ռէս Մէլիք՝ Աւագակապետի աջակցութե-ան մէջ նայելով: Ուսկի՞ց գիտէք ատիկա . . . ո՛վ ըսած է ձեզի . . . ինչպէ՞ս կըլլայ որ կը ճանչնաք Վանակոյ:

— Ռէս Մէլիք . . . աղէկ նայե-ցէ՛ք . . . միթէ՞ դեռ չը ճանչցաք թէ ձեր յարկին առկ, ձեր դէմը գտնուող մարդը՝ Ներսէս Արծրունին է . . . Ա-ւագակապետն է . . . :

Ռէս մէլիք չը կրցաւ իր հոգւոյն յուզումն արտայայտել . . . լեզուն իր քիմքին փակուած ֆնայց ու ապու-շե մը պէս նայեցաւ Աւագակապետին երեսը:

Ա՛յ, Ռէս Մէլիք, յարեց Աւագա-կապետը. շատ տարի չէ որ իրարմէ ըստնուած ենք. շատ տարի չէ որ զի-րար տեսած չենք . . . փոխարէն ձեզ անտարբեր մը ցան ու ցիւր բոլա մեզ ու այսօր արկածալից բայց նուիրակա-

տուն չէր յայտնած թէ ինքը լեռնե-րու Աւագակապետն էր. Ներսէս Ար-ծրունին էր . . . մէկ խօսքով՝ Հայ ազգին ա՛յն մեծ մարդերէն մին էր զոր Աստուած իրբեւ հրեշտակ մը, իբրեւ առաքեալ մը, իբրեւ փրկիչ մը խրկած էր երկինքէն:

Հետեւեալ լուռ ֆնայց:

— Ի՞նչու կը մտածէք, բարեկամս, յարեց Ռէս մէլիք անուշ ձայնով մը: Մի՛ կասկածիք . . . ես ալ ձեռքէս եկածին չափ աշխատած եմ հայրենի-քիս ու ազգիս . . . ես ալ շատ տա-ռապանքներ կրած եմ ա՛յն խեղճ Ժո-ղովուրդին համար, որ ծառէ մը խլւած տերեւի մը պէս փոթորկնեցաւ առջեւ նետուած է ու տեղ մը չունի որ իր գլուխը դնէ: Ա՛յ, գիտեցէ՛ք թէ վատ մէկը չեմ . . . :

Գիտեմ թէ վատ մէկը չէք, ընդհա-տեց Աւագակապետը, գիտեմ թէ տա-ռապան էք եւ ձեր կեանքը դո՛հած էք Հայրենեաց ու Ազգին համար: Ո՛հ, երբէ՛ք, երբէ՛ք չեմ կասկածիր . . . որովհետեւ գիտեմ թէ դուք սրտակից բարեկամն էք ա՛յն անձնուէր մար-դուն, որ տունէդ քիչ հեռու, աւե-րակներու ետին գտնուող գերեզմանա-տունի մը մէկ անշուք անկիւնը թաղ-

պետէն խնդրած էր որ անգամ մը զին-քը տեսնելու երթար, իրիկուն մը տունը գնաց:

— Բարեկամս, ըսաւ Ռէս Մէլիք, գիտեմ որ ազգին անձնուէրներէն մին էք դուք. գիտեմ որ ձեր բովանդակ կեանքը զոհելու պատրաստ եղած էք տարիներէ ի վեր ու այս ծերութեան օրերուդ մէջ ալ . . . ասոր վստահ եմ. միայն թէ՛ կարելի՛ է գիտնալ թէ ի՞նչ է ձեր անուշ . . . մանաւանդ՝ բնիկ ո՛ր տեղացի էք:

Աւագակապետը ժպտեցաւ՝ իր ա՛յն էութենէն ցլուցած ժպտովը, զոր չենք կրնար բացատրել, եւ որ յա-տուկ է միայն մեծ հոգիներու . . . :

Ի՞նչ անցաւ տնոր հոգիէն . . . :

Հաշտ խանդաղատարի ու անզուսպ ճառագայթ էր ա՛յն ճառագայթը, որ ցնցեց անոր երկաթի խառնուածքն ու պատկերութեան անոր խորհրդաւոր կերպարանքին վրայ . . . :

Ատիկա՛ Աստուած գիտէր . . . :

Միայն թէ՛ այդ հարցումը զոր ը-րաւ իրեն իր անցեալ օրերու պաշտելի մարդը, շատ դառն ու շատ կսկծալի հարցում մըն էր:

Ա՛յ, մինչեւ ան ատեն անձանթ ֆնալ ուղած էր անոր . . . մինչեւ ան

կազմակերպութեան գործը առնելու մասին յաջողութեամբ է որոշուի որ ալ ոճրաբոյժները թուղթէ պատնէյներու ետեւէն դեռ ինքզինքնին պարտկել փորձեն, այո՛, ներքին յեղափոխութիւնը տարած է յաղթանակը. այսօր այլեւս չարքերը խտացած են, վստահելի անձնաւորութիւններ ու մարմիններ իրենց պատշաճ դիրքերը գրաւած են. Բարեմաղթելի էր որ Դաշնակցականութիւնն ալ այս կորովը, այս գիտակցութիւնը, այս ներքին կոյտ յեղափոխութիւնը եւ սա ծափահարելի յաջողութիւնը ունենար, ու ազատէր զինք կաշկանդող, սխալ ճամբայ տանող — թրքոհայ զատին տեսակետով — չէֆերէ ու չէֆիկներէ:

Տաճկահայ դատին համար կազմուած — արդէն ուստահայ կամ պարսկահայ դատ չենք ճանչնար — յեղափ. կուսակցութիւններ բնականաբար պէտք էր Տաճկահայաստանի վիճակին ու ներքին բոլոր պարագտներուն ծանօթ ան ձեռք ղեկավարուել ալս բնական ու անհրաժեշտ պայման էր. Նազարբէկի կեդրոնը այս պայմանին զէմ մեղան. չու՛մ մըն էր, եւ այդ մեղանչումին գտնն արդասիքը Հնչակեան կուսակցութիւնը վերակազմուելու հարկադրեց: Այս ուստահայու եւ Տաճկահայու մէջ խնդիր դնել չէր, այլ ընդհակառակը անխտութիւն, միայն պայմանաւ որ կազմակերպութեան ղեկավարները բուն երկրին ու երկրացիներուն կեանքը, հանգամանքը ու բոլոր պարագաները մօտէն սերտած, միատեղ ապրած մարդիկներ ըլլային:

Ընդունինք որ վեր. Հնչակ. կուսակցութիւնը իր տաճկամեայ կեանքին մէջ մեծ գործ մը չը տեսաւ. նոյնը կարելի է ընդունել Հին Հնչակեաններու համար. բայց ասդին Դաշնակցութիւնը ինչ գործ տեսաւ, ինչ արդիւնք ցոյց տուաւ Տաճկաստանի մէջ, առաջնորդուելով լոկ իր կովկասահայ չէֆերէն: Եթէ գործ կարելի է անուանել Դաշնակցութեան կողմէ Հնչակեան նախկին սխալներու կերկնաւը, եւ այդ անոր «Պահանջ»-ը կողմը նշանակել, այդ «գործէն» ծագած աղէտներն ալ հարկ է պարտին կողմը նշանակել. եւ 12 տարուան հաշուելիքը կուսնական մեր աչքին առջեւ ուստի 10-12 տարի առաջուան

Տաճկահայոց վիճակը ընթերցողը թող բաղդադէ այսօրուան վիճակին հետ: Ահա հոտ կը տեսնուի Դաշնակցութեան երկրորդաստիճայ գործերուն տխուր հետեւանքը. երբ, Հնչակեանները անգործ էին:

Անուստան անխղճութիւն է եւ միամիտներու աչքին թող փչել ըսելը՝ թէ վեր. Հնչակեան կուսակցութիւնը կազմուած է կովկասահայոց մասնակցութիւնը մերժելու սկզբունքով: Ընդհակառակը, այդ կուսակցութիւնը գերկարաց ընդունած է ու պիտի ընդունի իր մէջ անխտաբար թէ կովկասահայը, թէ պարսկահայը, թէ հնդկահայը եւ թէ պուրկարահայը. եւ պատրաստ գտնուած է ու պիտի գտնուի ամենին իր յարմարութեան. իր ընդունակութեան ու իր ծանօթութեանց համեմատ տեղ ու դիրք տալ:

Աւելի շիտակ պիտի ըլլար եթէ խտրական ոգին փնտռուէր Դրօշակեաններու կովկասցի վարիչներուն մէջ. որոնք թէեւ Տաճկահայ դատին համար մարմին առած կազմակերպութեան մը պետեր, բայց միշտ զէպի տաճկահայութիւնը արհամարհանք ունենայէ չին զադրիք բնաւ. օրինակ. Դրօշակ թերթը որ գլխաւորապէս տաճկահայ կարգալ հասկնալու համար է, սակայն Տաճկահայուն գրեթէ անհասկանալի կովկասահայ լեզուաւ կը խմբագրուի միշտ, որովհետեւ կովկասահայ Դրօշակեան վարիչները կարհամարհեն թէ Տաճկահայը, թէ ասոր լեզուն, թէ ասոր գրականութիւնը, թէ ասոր զգացումը ու սիրտը, թէեւ անցեալ տարի հայ-թաթարական կռիւներուն առեն կովկասի մէջ ալ կուտող եւ արիւնը թափող Տաճկահայ գաղթականն էր գլխաւորապէս:

Այո՛, Տաճկահայ դատին համար եւ միայն անոր անունով կազմուող այդ Դրօշակեան կուսակցութեան կովկասահայ վարիչները, չէֆերը այն աստիճան կարեւորութիւն չեն տուած Տաճկահայուն եւ ասոր մտքին՝ ու դատողութեանը. եւ իրենց այս խտրական ու արհամարհանք ոգիով այնչափ առաջ գացած են որ սա Դ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին մէջ՝ առանց նկատի առնելու որ Տաճկահայաստանէն պատգամաւորներ չկան(*)

(*) Անդրանիկը միայն մէկ նիստի մը ներկայ եղած է. իսկ Զարդարեանը

միայն իրենք կովկասցիները անվարան կերպով վճռեցին Տաճկահայաստանցուն ճակատագիրը, ընկերավարութիւնը աւան դաշնակցականի պարտաւորիչ ընելով, եւ՛ հարիւր հաղարար Տաճկահայ կուտրուելուն պատճառ դարձող «ցուցական գործունէութիւնը» կըրկին շարունակելու որոշելով:

Այս սողերը գրելու չպիտի հարկադրուէի եթէ Դրօշակեան թերթ մը իր վերջին թիւերուն մէջ լրջութեան բոլոր բանասէրները կորսնցունելով զիս խօսիլ ստիպած չըլլար: Այդ միտքիւն հաւերաշխութիւն, եւ զօնկէս մերժող խմբակի տիրացուները եթէ նորէն հայ յեղափոխականը հայ յեղափոխականին զէմանել եւ կռիւ. վէճ, պայքար բանալ կուղեն, կը ցաւինք, բայց ալ չենք քաղուիք իրենց զէպի մեղ նետած ձեռնոցը իրենց երեսին զարնելու:

Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Տեղւոյս Ազգ. վարժարանի ուսուցչական խումբը կազմուած է նոր տարեշրջանի համար և այս անգամ բաւական գոհացուցիչ թուականներով վարձուած են ուսուցիչները, մտածելով թէ այս միջոցաւ միայն կարելի պիտի ըլլայ անոնցմէ ալ գոհացուցիչ արդիւնք սպասել:

Էջմիածնայ Գէորգեան ձեւարանի Ա. և Բ. դասարանները գոցուած են և որոշուած է այս տարի նոր աշակերտներ չընդունիլ բնաւ:

Արմաշի Դպրեվանդ մէջ ուսում ստանալու համար՝ Եղկատի Առաջնորդը խնդրած է Պատրիարքարանէն Եղկատցի մէկ աշակերտ ընդունիլ: Պատրիարքը պատասխանած է թէ անկարելի է այս տարի նոր աշակերտ ընդունիլ, որովհետեւ Դպրեվանքը նիւթապէս խիստ անձուկ վիճակի մը մէջ կը գտնուի ներկայիս:

Հատուց հետագած Տաճկահայաստանէն, հետեւաբար անտեղեակ երկրի արդի իսկական վիճակին ու պահանջներուն (իդմիրը Հայաստան չէ): Ուրիշ ոչ մէկ Տաճկահայ այդ ժողովին մէջ:

— Երուսաղէմի մատակատար Գայրգճեան վարդապետը հրաժարած է պաշտօնէն:

— Ամերիկայի Մ. Նահանգաց կառավարութիւնը խնդրած է բոլոր կառավարութիւններէն որ Ալէքսան Արզուեան անձը ուր որ գտնեն ձերբակալեն իր պարզ ոճրագործ և յանձին Ամերիկեան իշխանութեան:

— Պէրպէ, եան վարժարանի ընթացաւարտներէն Տ. Բարսեղ Իէշիշեան Թուրք կառավարութեանն արտօնութիւն ստացած է Զմիւռնիոյ մէջ Արշալոյս անուն օրաթերթ մը հրատարակելու:

— Տ. Համբարձում Ալաճաճեանի մահուամբ դադրած Պոլսոյ Փռնը շարաթաթերթը արտօնուած է վերստին հրատարակուիլ Տնօրէնութեամբ հանգուցեալ Հ. Ալաճաճեանի երէց որդւոյն:

— Հռոմայ Պապը վենետիկի Միթթարեաններու ներքին գործերուն միջամտելով, Մուրատ-Ռափայէլեան վարժարանին տեսուչ կարգած է Հ. Յովհաննէս Վ. Թորոսեանը, որ ասկէ առաջ Պոլսոյ Դատը գիւղի վարժարանին տեսուչն էր: Կ. Պոլսոյ Միթթարեաններուն մեծաւոր տեսուչ նըշանակուած է Հայր Յ. Տէրէյեան վարդապետը:

— Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին ուխտաւորները այս տարի սովորականին կրկնապատիկ եւելած է: Փոքր-Հայքի և Կիլիկիոյ շատ մը կողմերէն բազմաթիւ բարեպաշտներ «Մուրատաւոր Ս. Կարապետ» գերեզմանը ուխտի գացած են, այնպէս որ վարդապետները իրենց սենեակները ուխտաւորներու յատկացնել ըստիպուած են:

Այս շնորհիւ բաւական գոհացուցիչ հասոյթ գոյացած պէտք է ըլլայ որով վանքին ժառանգաւորաց վարժարանը նպաստաւորութի:

ճակատագիր մը նետեց իրարու գիրկը: Ասիկա նախախնամութեան կամքն է . . . Ան է որ կառավարողէ մեզ ու Անոր ձեռքն է որ մեր վրայէն չը պակսիր: Դո՛ւք՝ ձեր երջանիկ օրերու մէջ տառապեցաք ու ձեր ձեռքէն եկածէն աւելի աշխատեցաք . . . անա՛ այսօր, ձեր խոր ծերութեան օրերու մէջ ալ, նոյն անձնուրիշութիւնը ցոյց տուիք աղատարարի դեր կատարելով հարիւր հոգիէ բաղկացած գաղթականութեան մը . . .

— Ե՛ս . . . բացաքանչեց ոէս Մէլքի խղիւղելու մօտ ձայնով մը. ես աղատարար մը կոչուելու արժանի չեմ. իմ կեանքս փրկելու, համար հարկադրուած էի անոնց կեանքն ալ փրկել . . . հետեւաբար պարտականութիւնէ աւելի պարագան էր այդ դեր կատարողը: Բայց դո՛ւք . . . Կա՛խ, դուք արժանի էք այդ անունն, որովհետեւ ձեր կեանքը զրիք վտանգներու հանդէպ եւ ասիկա հիմակ չէ . . . այլ՝ քսան եւ չորս տարիներէ ի վեր Դուք մեր արիւնյանիկ աշխարհքին մէկ ծայրէն մըսը թափառեցաք ու ամեն տեղ ամեն վայր, ամեն ուրեք արիւնքներ տեսաք ու սրբեցիք. թըշուառութիւններ տեսաք ու միթթարե-

ցիք, զրկանքներ տեսաք ու քաջալերեցիք . . . վերջապէս բարի հրեշտակ մը եղաք տառապալիներուն ու վրէժխնդիր ոգի մը՝ չարագործներուն . . .

— Ռէս Մէլքի՛ք, ես կը մեկնիմ . . . Աստուած ձեզի կեանք տայ որ Հայրենեաց երջանիկ օրերու մէջ ալ ապրիք Ո՛վ գիտէ . . . գուցէ՛ այս անգամ բաղդ չուենանք անտեղու. հետեւաբար անա՛ կը համբուրեմ ձեր ճակատն ու այնպէ՛ս կը բաժնուիմ:

Երկու անձնուրիշներն իրարու գիրկը նետուեցան ու կարօտով մը համբուրեցին զիրար:

Աւագակապեաք մեկնեցաւ: Մի՛նա՛կ էր . . . լեռներու մէջ՝ դիչերներ ճամբորդելով Պարսկաստան հասաւ:

Երբ տունը մտաւ, մամիկը յայտնեց թէ երկու օրէ ի վեր Լուսիս հիւանդ եղած է ու անկողնէն չը կրնար գլուխը վերցունել: Ասիկա գառնացուց իր հօգին. իսկոյն աղջկան սենեակը գնաց:

(Շարունակելի)

ՕԳՏՈՒԵՑԷՔ ԱՌԻԹԷՆ

Հասան մեզ մեծ քանակութեամբ նոր առնուած

ՀՁՅԵՐԷՆ ԿՐԱՄՕՅՕՆԻ ՓԼԱԳԱՆԵՐ

Փութացէք ապահովել Ձեզ վաճառուիւր այս նոր փաթեաներու Ձեր նահանգին համար:

Մեր փաթեաներու ցուցակները հայերէն, տաճկերէն եւ զանազան եւրոպական եղանակներու կ'ուղարկենք ձեր փաթառողաց:

Հեծելանիւր, կրամօֆոնի եւ պէնզին լամպաներու վրայ մի տաք ապսպրանք ուրիշ տեղ նախ քան մեր ցուցակները աչքէ անցնելը:

Ն. ԱԼԵԱՆՈՒԿ և Ռ. ԴԵՐՈՒՆԵԱՆ — ՌՈՒՍՃՈՒԳ ԳՈՐԾԱՐԱՆ ՀԵԾԵԼԱՆԻԻ ՓՐՕԿՐԷՍ

ፆፐፐፐፐፐፐ

S U ህ ስ ለ ስ ሂ

U U P N F

የበኩላችን

— Բուսիանըն պաղը ճիհէթ
լէրինտէ եռմուրճագ վէ գօլէր
իլլէթլէրինտէն շուրպանլար կի

ԻԹԱԼԻԱ ՎԷ ԱՌԱՍՏՐԻԱ
ԹԻՒՐԳԻԱՏԱ

ԻՇ ԱՐԱՅԱՆԼԱՐԱ.

Մատաւ Մաննիկ թ. Պօղոսեա
օգօրիա Գո. րտ Բունար
Սէլօ Թուրքերլար

Издатель: Д-ръ М. Торосиянъ

печатница Д. Тодоровъ С-не — Варна

ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

ՄԱՔՈՒՐ, ԱԺԱՆ ԵՒ ՇՈՒՏ
ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻՆ

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԲ ՓՈԽՓՈՎ ԿՆ ԿԱՏԱՐՈՒՄ

ՎՃԱՐՈՒՄԸ ԿԱՆԻՔԻ Է